8. ԽԵՂՃ ՈՒ ԶԱԼՄ ԱՂԲԵՐ

Երկու ըռանճպար աղբեր կէղին, մեկը շատ զալմ, մեկը՝ խեղճ:

Զալըմը կասա խեղճին. - Չկանաս քաղ էնիս. գնա սելի, խաց, ջուր, ա՛ռ, արի:

Խեղճը կէրթա, հանգան կուգա. ջոջ աղբեր կըռըքի, էսօր կծեծա: Էն տեղ ջոջ ա՛ռտ մը կեղի, հոն կը գնա խեղճ աղբոր հառեջ, կասա. - Ես կէրթամ սել, մեռնիս, չուրի ես հիգամ, իդա հոն պտի քաղիս:

Աղբեր նստի՝ ախու կուլա, խըտ լալուն կը տեսի ուր կշտին էրկու խանում կա:

- Հորի՞ն կուլաս, - ասին էդ խեղճ մարդուն:

- Իմ զալմ աղբեր, ջոջ հոն դրեր ա իմ հառեջ, «չուր ես իգամ, պտի քաղիս», - կասա:

-Դե, հէլի քաղա, - ասին:

- Քո՛ւր, գեղ մոտիկ ա. ես ի՞մալ քաղիմ:

- Քու բերան կոտռիր, ձի քուր չասիր, օ ասիր. հէլի, «յա՛ քուր ու աղբեր» ասա, մանգաղ թալ. ո՛ն օ խարցուցա, բան չասես:

Աղբերն էր, շուտ-շուտ տարավ սել, դարձավ, տեսավ հարտ հըմեն էղեր ա խուրձ ու բարդոց, հարտ տկմանց պրծած ա:

- Աղբեր, դու չկաներ խուրձմ կապեր, էս ի՞մալ էղեր ա:

- Աղբեր, - կասա, - քե ի՛նչ, դու բարդոց կրա:

Արտի կշտին ջոջ արտ մէլ կեր, աղբեր դրեց խեղճ աղբոր վրեն, ասաց. - Մեռնիս, էն արտ էլա դավով խըտ հիրարու պտի քաղինք:

- Աղբեր, վասն ի Ասու սիրուն, ես խըտ քե դավի չունիմ:

- Չէ, - կասա, - պտի հէլլիս իմ միջաց վրեն:

Կը կզվի. խեղճ աղբեր կը խանա միջաց վերեն, խուրձ մի էն յանեն կը քաղա, կը կապա. խուրձ մի էն յանեն ու կը շտկի. օղնեն կառնի տակ զաղբեր:

Դորիսի խեղճ աղբեր կը կզի, էն զալմ կէլլե օղան վերեն:

- Դե, քաղա, - կասա, - տեսնիմ ի՞մալ պտի քաղիս:

Խեղճ աղբեր, ուր մտքի մեջ կասա. «Յա՛ քուր ու աղբեր». զուր մանգաղ կը թալա:

Զալմ աղբեր իշկեց օ հարտ էղավ խուրձ ու բարդոց: Կասա. - Աղբեր, քու օղան վերևեն զքու գլուխ կը կտռիմ. էս հունար քե հո՞ւստ ա:

- Աղբե՛ր, մկա զիմ խոգի՞ն կառնիս. Աստվածն ա կօգնա:

Օրս էլա խեղճ աղբեր առավ զեզներ, գնաց արոտ. ճըռտ թալեց, զեզներ տարավ. էնի «յա քուր ու աղբեր» էրաց, փետ թալեց. ճըռտ բռնեց. կապեց, տարավ հուքմաթ:

Հուքմաթ ասաց. - Էսի մեքի մարդըմ իմալ ծեր քսանին բռնեց:

- Ինք մեկ էր, օ կռիվ կէնեն քառսուն հոգի կռիվ կէնեն:

Հուքմաթ խարցուց. - Օղորթ ա, խըտ քե ղըխլա՞ր կա:

- Խա՛ իմ խետ փերի կա:

Որ ասաց «փերի կա». փերիք ժողնվան, տարան էսի ջոջ քարիմ գլխից էցգեցին, մեռավ: